

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ
YOU HAVE A RIGHT TO KNOW

տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր / b u l l e t i n N 3 3

Հունիս / June 2011

Հրատարակվում է 2001 թվականից / Published since 2001

www.foi.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ / CONTENT

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 10 տարեկան է	5
ՏԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	
ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցը	7
Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնի շրջանավարտ պաշտոնյաները	8
ՍԵՎ ՑՈՒՑԱԿ	11
ՍԵՆ ցուցակի չափորոշիչներ	12
Առողջապահության եւ արտակարգ իրավիճակների նախարարները «սեւ ցուցակում». նրանք խախտել են ինֆորմացիա ստանալու իրավունքը	13
Արձագանքում են "ՍԵՆ ցուցակում" ընդգրկվածները	14
ՍԵՆ ցուցակի եւ ժանգոտ կողպեքի հզոր ուժը	15
Հաջող ելքով "կռիվ"	16
Արդիականացվեց ՏԿՆ կայքը	18
Սուպերմարկետները՝ տեղեկատվություն տնօրինողներ	19
Հիմնադրվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդ	20
Ռոբերտ Զոչարյանն՝ ընդդեմ "Հրապարակ" օրաթերթի հայցի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը	21
«ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր»օրաթերթի» գործի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը	27
"Լակոտը" 200 հազար դրամ արժե՞	31

ENGLISH VERSION

The Freedom of Information Center of Armenia celebrates its 10th anniversary	32
FOICA won one more case in the court	33
The 200 Officials who have Graduated from the Freedom of Information Educational Center	34
Black List	36
Criteria for the Black List	37
BLACK LIST FOLLOW -UP	38
Public Launch of the Website of the Ministry of Territorial Administration of Armenia	41
Supermarkets as Information Holders	41
The Information Disputes Council was Founded on May 1, 2011	42
The First Expert Conclusion of the Information Disputes Council	42
The Expert Conclusion of the Information Disputes Council	42

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան
Project Director Shushan Doydoyan



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 10 տարեկան է



ՏԱ մրցանակաբաշխություն 2003



ՏԱ մրցանակաբաշխություն 2006



Ֆոտոցուցահանդես 2010
ԻԱԿ նախագահ Շ. Դոյրոյանը եւ ԶԳ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Մ. Յովանովիչը



ՏԱ մրցանակաբաշխություն 2009
ԶԳ վարչապետ Տ. Սարգսյանը եւ Շ. Դոյրոյանը

Անցած տասը տարիների ընթացքում ԻԱԿ-ին հաջողվել է բացել հարյուրավոր փակ դռներ և հրապարակայնացնել հազարավոր պաշտոնական փաստաթղթեր: Իր գործունեության 10 տարիների ընթացքում ԻԱԿ-ը 6200 մարդու ապահովել է իրավական խորհրդատվությամբ, տեղեկատվության տրամադրումն ապօրինի մերժած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ 28 դատական գործ է հարուցել՝ 90% դրական արդյունքով, ինչի շնորհիվ վերականգնվել է տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը: Այս տարիներին ԻԱԿ-ը հարյուրավոր հոդվածներ, տասնյակ գրքեր, ուղեցույցներ և ժողովածուներ է հրատարակել տեղեկատվության ազատության օրենսդրության և իրա-

վունքի վերաբերյալ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ակտիվ դերակատարում է ունեցել "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում:

Կենտրոնը ՀՀ ողջ տարածքում ուսուցումների միջոցով օգնում է քաղաքացիներին, ՀԿ, ՁԼՍ և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև պետական պաշտոնյաներին զարգացնել իրենց գիտելիքը և հմտությունները տեղեկատվության ազատության ոլորտում:

2003-2011թթ ընթացքում 5300 մարդ՝ այդ թվում 2500 պաշտոնյա, ստացել է գիտելիք և հմտություն տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ: "Կենտրոնը տարեկան 1000 տեղե-

www.foi.am

կություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքն ամենակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը", - նշում է ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանը:

2001թ.-ից մինչ օրս Կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: Կենտրոնը հրապարակում է "Դու տեղյակ լինելու իրավունք ունես" տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում հրապարակվում է այն պաշտոնյաների "Սև ցուցակը", ովքեր ոտնահարել են քաղաքացիների, լրագրողների, հասարակական կազմակերպությունների և իրավաբանական անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքը: ԻԱԿ-ը ՁԼՄ-ներով լայնորեն հրապարակյալացնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները: ԻԱԿ-ն իրականացնում է մի շարք ծրագրեր կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման նոր մեխանիզմներ ներդնելու, կատարելագործելու և դրանք հրապարակայնության ապահովմանն ու մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի իրականացմանն ուղղելու նպատակով:

Կենտրոնի ՏԱ ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ ոսկե բանալի է շնորհվում ՏԱ օրենքը լավագույնս կիրառած քաղաքացիներին, ՀԿ-ներին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և լրագրողներին: Տրվում են նաև բացասական մրցանակներ՝ կողպեքներ, ՏԱ օրենքը խախտող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հուլիսի 1-ին լրացավ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպության հիմնադրման տասնամյակը: Կենտրոնի հիմնական առաքելությունն է պաշտպանել քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը:



ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցը

Հունիսի 20-ին ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ "Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՈԱԿ-ի՝ վերջինիս պարտավորեցնելով 5-օրյա ժամկետում տրամադրել ԻԱԿ-ի հարցման պատասխանը եւ փոխհատուցել 24.000 դրամ պետուրքը:

Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել "Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՈԱԿ-ի գործողությունները, պարտավորեցնել ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու ԻԱԿ-ի կողմից 27.02.2009թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը և հօգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 24.000 դրամ:

Հիշեցնենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. փետրվարի 27-ին "Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՈԱԿ-ին հարցում է ուղարկում՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. "Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 և 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության և նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ-ին որքա՞ն հատույթ է ստացել հանձնարարության և նկարագրության պայմանագրերից:

Եվ 2.5 տարի տևած համառ ջանքերի շնորհիվ վերջապես ԻԱԿ-ը կստանա վերոնշյալ հարցերի պատասխանը:

Տես նաև՝ ԻԱԿ-ն ընդդեմ "Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՈԱԿ-ի դատական գործի մանրամասները՝ www.foi.am/hy/all-cases/item/570/

Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնի շրջանավարտ պաշտոնյաները

2010թ. նոյեմբերի 22-ից մինչ 2011թ. հունիսի 8-ը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում վերապատրաստվել է 301 քաղծառայող:



2011 թ. հունիսի 8-ին ավարտվեց Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում քաղաքացիական ծառայողների ուսուցման երկրորդ փուլը, որի արդյունքում 200 պաշտոնյա շրջանավարտներ ստացան պետական վկայականներ "Ամբողջականության հիմունքների (Integrity), տեղեկատվության ազատության եւ հասարակության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում" վերապատրաստման դասընթացն հաջողությամբ ավարտելու վերաբերյալ:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են քաղծառայողներ ՀՀ բոլոր նախարարություններից, կառավարությանն առընթեր մարմիններից, մարզպետարաններից, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդից, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից:

Դասընթացը բաղկացած է երկու հատվածից՝ ամբողջականության հիմունքները քաղաքացիական ծառայության համակարգում եւ տեղեկատվության ազատությունը և հասարակության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում: Այս դասընթացի շրջանակներում քաղաքացիական ծառայողներին ուսուցանվում է տեղեկատվության ազատության իրավունք, "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի կիրառման պրակտիկա, տեղեկատվություն ստանալու և տրամադրելու եղանակները. տեղեկատվության տրամադրման մեթոդան հիմքերը. բողոքարկում և տեղեկություն ստանալու իրավունքի խախտման պատասխանատվությունը, տեղեկատվության էլեկտրոնային կառավարման մեթոդները, ինչպես նաև պաշտոնյաների էթիկա, կոմունիկացիայի կառուցվածքը. քաղաքացիների սպասարկում, միջանձնային հարաբերությունների տեսակները. ղեկավար-ենթակա հարաբերություններ. միջանձնային հարաբերություններն աշխատավայրում:

Դասընթացին մասնակցող քաղաքացիական ծառայողներին տեղեկատվության ազատության վերաբերյալ դասաժամերի շրջանակներում առաջարկվել է լրացնել 2 հարցաշար SU վերաբերյալ՝ մեկը դասընթացի սկզբում, մյուսը՝ վերջում՝ պարզելու մասնակից քաղծառայողների տեղեկատվության ազատության վերաբերյալ ունեցած գիտելիքի ծավալը մինչ վերապատրաստումը և վերապատրաստումից հետո: Առաջին հարցաշարը, սակայն, 200 քաղծառայողից 170-ն է լրացրել: 170 քաղծառայողից 107-ի (62%) աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում քաղաքացիներին կամ լրագրողներին տեղեկատվության տրամադրումը:

Չնայած "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ.-ին, բայց 170 մաս-

նակցից 25-ը (14%) նշել էր, որ SU օրենքի մասին առաջին անգամ լսել է 2000-2003թթ.-ին, այսինքն՝ մինչ օրենքի ընդունումը:

60 (36%) քաղծառայող SU օրենքի մասին առաջին անգամ լսել է 2003-2006թթ.-ի ընթացքում, իսկ 85 (50%) քաղծառայող էլ միայն 2007-2011թթ.-ին է իմացել, որ գոյություն ունի "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենք:

Հիմնականում պետական կառույցներից տեղեկատվություն ստանալիս խնդիրներ ծագում են ժամկետների պատճառով: Այն հարցին, թե ի՞նչ ժամկետներում պետք է պատասխանել տեղեկատվություն ստանալու հարցումներին, 170 քաղծառայողից 112-ը (66%) նշել է 5-օրյա ժամկետը, 47-ը (27%) դեռևս առաջնորդվում է 15-օրյա տարբերակով, իսկ 11-ը՝ (7%) պատասխանում է 1 ամսյա ժամկետում:

Համաձայն "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Այն տեղեկությունը, որի տրամադրման համար պահանջվում է կատարել լրացուցիչ աշխատանք, տրամադրվում է հարցումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Դասընթացին մասնակցությունը հնարավորություն տվեց քաղծառայողներին իմանալ օրենքով սահմանված ժամկետների մասին, ինչը, հուսով ենք, կանդրադառնա նաև նրանց պրակտիկայի վրա:

Իրավիճակն ավելի վատ է պարտադիր հրապարակման պարտականությունը կատարելիս: Մինչ դասընթացն ավարտելը 170 մասնակցից միայն 37-ն (21%) էր տեղյակ, որ պետական մարմինները պարտավոր են սեփական նախաձեռնությամբ որոշակի խումբ տեղեկություններ հրապարակել, 53-ն (31%) ընդհանրապես տեղյակ չէր օրենքի այս պահանջի մասին, իսկ 80 (48%) մասնակից էլ նշել էր, որ մասամբ է տեղյակ: Ըստ նրանց՝ պարտադիր հրապարակման են ենթակա "այն տեղեկությունները, որոնց ինքը տիրապետում է և ի պաշտոնե իրավունք ունի տրամադրելու" և "պաշտոնյայի լիազորությունների շրջանակներում է", "գաղտնիություն չպարունակող տեղեկություններ", "բյուջե",

"իր իրավասությանը վերաբերող" տեղեկությունները, ինչպես և "տարեկան հաշվետվությունները", "պաշտոնատար անձի հայտարարագիրը", "թափուր աշխատատեղերի մասին", "քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի մասին", "պաշտոնյայի անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոս, էլ. փոստ" տեղեկությունները և այլն:

Դասընթացի սկզբին մասնակիցներից միայն 70-ն (41%) է նշել, որ տեղյակ է, թե ինչ հիմքերով կարող է մերժել տեղեկատվություն ստանալու հարցումը, 41-ը (24%) տեղյակ չէր, 59-ն (35%) էլ մասամբ էր տեղյակ: Որպես տեղեկատվության տրամադրման մերժման հիմքի օրինակ մասնակիցները նշել են՝ "անհատական տվյալները", "պետական գաղտնիքը", "ծառայողական գաղտնիք պարունակող, պետական անվտանգություն, բանկային, ծառայողական, առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները": Այս ցուցանիշը պրակտիկայում կարող է հանգեցնել մերժումների ոչ պատշաճ կիրառման:

Դասընթացի ավարտին մասնակիցներին առաջարկվել է լրացնել մեկ այլ հարցաշար՝ պարզելու համար, թե տեղեկատվության ազատության վերաբերյալ ինչ գիտելիք ստացան մասնակից քաղծառայողները: Երկրորդ հարցաշարին 200 մասնակցից պատասխանել է 185-ը:

Պատկերը հետևյալն է.

- 185 քաղծառայողից 145-ը (78%) պատասխանել է, որ եթե քաղաքացին իրենց դիմում է տեղեկատվություն ստանալու բանավոր հարցմամբ, ապա իրենք անմիջապես պատասխանում են,
- 40-ն (22%) էլ նշել է, որ այդ պարագայում խնդրում է հարցումը գրավոր ներկայացնել:
- Պաշտոնյաներից ոչ մեկը չի նշել հարցաշարում առկա "որևէ ընթացք չենք տալիս" տարբերակը:

Այն հարցին, թե ինչ պետք է անել, եթե քաղաքացին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումով խնդրել է տրամադրել գաղտնիք համարվող տեղեկություններ, մասնակիցներից 35-ը

(19%) նշել է "պետք է զանգահարելու միջոցով տեղյակ պահել քաղաքացուն, որ իր խնդրած տեղեկությունները տրամադրման ենթակա չեն" տարբերակը, 143-ը (77%) նշել է "պետք է գրավոր մերժել խնդրված տեղեկությունների տրամադրումը" տարբերակը, իսկ 7 (4%) մասնակից էլ ընտրել է "պետք է չպատասխանել հարցմանը" տարբերակը: *Փաստորեն, դասընթացի ավարտից հետո անգամ կային մասնակիցներ, որոնք շարունակում էին մնալ այն կարծիքին, որ գրավոր հարցմանը կարելի է զանգի միջոցով պատասխանել, կամ էլ՝ հարցումն անպատասխան թողնել, ինչը մտահոգիչ է: ՏԱ օրենքի համաձայն, եթե քաղաքացին գաղտնիք պարունակող տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկում, մերժումը միանշանակ պետք է լինի գրավոր՝ համապատասխան հիմնավորմամբ:*

Զնայած "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, սակայն 44 (24%) մասնակից դեռևս այն կարծիքին է, որ, այնուամենայնիվ, տեղեկատվություն հայցող քաղաքացին պարտավոր է նշել, թե ինչի համար է իրեն անհրաժեշտ այդ տեղեկատվությունը, 185 քաղծառայողից միայն 141-ն (76%) է այն կարծիքին, որ տեղեկություն խնդրած քաղաքացին չպետք է նշի, թե ինչի համար է խնդրում կամ ինչ նպատակով է օգտագործելու իր խնդրած տեղեկությունները: *Սա ևս մտահոգիչ ցուցանիշ է, քանի որ շատ հաճախ քաղաքացիները բախվում են հարցումը հիմնավորելու խնդրին:*

Այնուամենայնիվ, հարցաշարերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս վերապատրաստման ավարտից հետո քաղծառայողների պատկերացումներն ու գիտելիքները տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ էականորեն փոխվում են: Դասընթացի ավարտից հետո մասնակիցներն առաջարկում են, որ կառույցների ղեկավարները ևս անցնեն "Ամբողջականության հիմունքների (Integrity), տեղեկատվության ազատության և հասարակության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում" վերապատրաստման դասընթացը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի բաց և հրապարակային աշխատել:

Ընդհանուր առմամբ, բոլոր մասնակիցները դասընթացից հեռանում էին գոհունակությամբ՝ ցանկություն հայտնելով կրկին վերապատրաստվել Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում: Մասնակիցներից շատերը գոհունակությամբ նշում էին, որ այս "դասընթացները շատ օգտակար էին և հետայսու ՏԱ օրենքը իրենք ոչ միայն կկիրառեն, "այլ նաև՝ կօգտագործեն, քանի որ շատ հարցեր կարելի է պարզել՝ տեղեկատվության ազատության իրավունքի շնորհիվ", "հնարավորության դեպքում նշված դասընթացները կազմակերպել ղեկավար աշխատողների՝ մարմինների ղեկավարների համար. դա նրանց համար անհրաժեշտ է", "օգտակար նախաձեռնություն է միատեսակ աշխատանքից կտրվելու և իրերին այլ տեսանկյունից նայելու համար", "հետաքրքիր էր, կփորձեն կիրառել ստացած գիտելիքներս պրակտիկայում", "այս կարգի քննարկումներն իսկապես խիստ անհրաժեշտություն են, տեսական և իմացական գիտելիքները տեղեկացվածության շրջանակների ընդլայնման են նպաստում: Առօրյա և աշխատանքային գործունեության մեջ շատ օգտակար կլինեն":

Հիշեցնենք, որ Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում վերապատրաստումների առաջին փուլն իրականացվել էր 2010թ. նոյեմբերի 22-ից մինչ 2010թ. դեկտեմբերի 22-ը, որին մասնակցել էր 101 քաղծառայող՝ ստանալով պետական նմուշի վկայական:

Այս անձինք խախտել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում:

- **Հարություն Քուշկյան - ՀՀ Առողջապահության նախարար**

ՀՀ առողջապահության նախարար Հ. Քուշկյանն անպատասխան է թողել ԻԱԿ-ի 07.02.2011թ.-ի հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել, թե կա՞ն արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագրվել են 2010թ.-ին, եւ եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

- **Արմեն Երիցյան - ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար**

Գաղտնագրված փաստաթղթերի մասին ԻԱԿ-ի 07.02.2011թ.-ի հարցմանն ի պատասխան ՀՀ ԱԻ նախարարությունը հղում է արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ նշելով, որ այդ փաստաթղթերն առգրավվել են ՀՀ ՀԶԾ կողմից: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, ԻԱԿ-ին տեղեկացրել է, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն առկա են ԱԻ նախարարությունում: Այսինքն, տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է: Սակայն ԱԻ-ը անպատասխան է թողել գաղտնագրված փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ԻԱԿ-ի 29.03.2011թ.-ի կրկնակի հարցումը:

- **Բորիս Մակիչյան - Հյուսիսային համալսարանի ռեկտոր**

Հյուսիսային համալսարանն անպատասխան է թողել քաղաքացի Հռիփսիմե Հովհաննիսյանի 17.03.2011թ. հարցումը, որով քաղաքացին խնդրել էր հայտնել 2010թ.-ին Հյուսիսային համալսարանում կատարվել են արդյոք վերանորոգման աշխատանքներ, եթե այո, ապա որքա՞ն գումար է ծախսվել: Հյուսիսային համալսարանն անպատասխան է թողել նաեւ Հռիփսիմե Հովհաննիսյանի համար ԻԱԿ-ի կողմից 29.03.2011թ.-ին ուղարկված նույնաբովանդակ հարցումը:

- **Սարգիս Ղարաբեշիշյան - Ստեփանավանի քաղաքապետ**

Ստեփանավանի քաղաքապետարանն անպատասխան է թողել ԻԱԿ-ի 18.04.2011թ. հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել Ստեփանավանի ավագանու այն որոշման պատճեն, որով ավագանին սահմանել էր Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող տեղեկատվության տրամադրման վճարի չափը՝ 1 էջի համար 500 ՀՀ դրամ:

ՍԵԼ ԳՈՒԾԱԿԻ ՃԱՓՈՐՈՇԻՋՆԵՐ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը յուրաքանչյուր եռամսյակ հրապարակում է տվյալ ժամանակահատվածում մարդկանց տեղեկատվությունն ստանալու իրավունքը խախտած պաշտոնատար անձանց ՍԵԼ ցուցակ: Այնուհետև, եռամսյակային տվյալների հիման վրա տարեվերջին կազմվում է տարեկան ՍԵԼ ցուցակ:

Սել ցուցակում հայտնվում են այն պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի կամ հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարները, ովքեր.

- չեն պատասխանում տեղեկատվությունն ստանալու հարցումներին,
- տեղեկատվությունն ստանալու հարցումներին պատասխանում են "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ (չնայած "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքը ՏԱ գրավոր հարցումներին պատասխանելու համար սահմանում է 5 աշխատանքային օրյա ժամկետ, ԻԱԿ-ը հաշվարկում է լրացուցիչ 4 աշխատանքային օր՝ որպես փոստային առաքման ժամկետ: Ուստի, պատասխանը համարվում է ժամկետ խախտած, եթե այն չի ստացվել ՏԱ հարցումն ուղարկելուց 9 աշխատանքային օր հետո),
- անհիմն մերժում են տեղեկատվությունն ստանալու հարցումները,
- թերի, ոչ լիարժեք, կամ կեղծ տեղեկատվություն են տրամադրում,
- տեղեկատվության տրամադրման համար անօրինական վճարներ են սահմանում և/կամ գանձում,
- տեղեկատվության տրամադրման ոչ պատշաճ աղբյուրների են հղում կատարում,
- պատշաճ կերպով չեն հրապարակում "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (հոդվածներ 3 և 7):

Տեղեկատվության ազատության իրավունքը խախտած գերատեսչության ղեկավարը հայտն-

վում է ՍԵԼ ցուցակում, որովհետև

- ա) նա է ներկայացնում գերատեսչությունը և պաշտոնապես, և գործնականում,
- բ) "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքը պահանջում է, որ բոլոր պետական մարմինները հետևեն սահմանված կարգին և պաշտպանեն և նպաստեն քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացմանը, և այդ առումով, եթե գերատեսչությունը չի կատարում օրենքի պահանջները, վերջնական պատասխանատվությունն ընկնում է գերատեսչությունը ղեկավարող պաշտոնյայի վրա:

Որևէ պաշտոնատար անձի և համապատասխան գերատեսչությանը ՍԵԼ ցուցակում ներառելուց առաջ ԻԱԿ-ը ձեռնարկում է հետևյալ անհրաժեշտ քայլերը.

Քայլ 1. Վերոնշյալ աշխատանքային 9-օրյա ժամկետը լրանալուց հետո ԻԱԿ-ի աշխատակիցը զանգահարում և ճշտում է, թե արդյոք տեղ է հասել հարցումը. և եթե այո, ապա ում վրա է մակագրված:

Քայլ 2. Թերի, ոչ լիարժեք պատասխան կամ անհիմն մերժում ստանալուց կամ ընդհանրապես պատասխան չստանալուց հետո Կենտրոնն ուղարկում է կրկնակի հարցում (այս դեպքում նույնպես վերջնաժամկետը աշխատանքային 9-օրյա ժամկետն է):

Քայլ 3. Կրկնակի հարցումն անպատասխան թողնելու դեպքում տվյալ մարմինը և դրա ղեկավարը հայտնվում են ՍԵԼ ցուցակում:

Ի դեպ, ԻԱԿ-ի ՍԵԼ ցուցակն անփոփոխ չէ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային ՍԵԼ ցուցակում հայտնվելուց հետո կվերանայեն տեղե-

կատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ կիրականացնեն տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվի տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում: Այդպիսի գերատեսչությունների առաջընթացը ԻԱԿ-ը

կնշի Սև ցուցակում: Տարեվերջին տարեկան Սև ցուցակ է կազմվում եռամսյակային սև ցուցակների տվյալների հիման վրա: Տարեկան Սև ցուցակում նույնպես կնշվեն համապատասխան գերատեսչությունների կողմից իրականացված դրական փոփոխությունները:

Առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարները «սև ցուցակում». նրանք խախտել են ինֆորմացիա ստանալու իրավունքը

Երեք պաշտոնյա և մեկ ռեկտոր հայտնվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հի-ի (ԻԱԿ) այս տարվա առաջին եռամսյակի "սև ցուցակում": Այս մասին մայիսի 10-ին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց ԻԱԿ ղեկավար Շուշան Դոյրոյանը՝ ներկայացնելով այս տարվա առաջին եռամսյակի տվյալները:

Դոյրոյանի տեղեկացմամբ, իրենք դիմել են բոլոր նախարարություններին՝ հարցմամբ, թե ի՞նչ գաղտնի փաստաթղթեր են նրանք գաղտնագերծել: "Բոլոր նախարարություններից ընդամենը Պաշտպանության նախարարությունն էր, որ գաղտնագերծել է որոշակի թվով փաստաթղթեր: Մեկ փաստաթուղթ էլ գաղտնագերծել էր արտգործնախարարությունը",- ասաց ԻԱԿ ղեկավարը: Առողջապահության նախարար Զարություն Քուշկյանը, Դոյրոյանի խոսքով, ընդհանրապես չէր պատասխանել իրենց հարցմանը, իսկ ԱԻ նախարարն ասել էր, թե իրենց գաղտնագերծած փաստաթղթերը առգրավվել է Զատուկ քննչական ժառանգության կողմից: "Սակայն մենք պարզեցինք, որ նա մեզ տրամադրել էր կեղծ տեղեկություններ",- ասաց Դոյրոյանը:

ԻԱԿ ղեկավարը հիշեցրեց, որ հուլիս գաղտնի փաստաթղթերը պետական կառույցները պարտավոր են գաղտնագերծել ամենաուշը 30 տարի հետո, իսկ սովորական գաղտնիության փաստաթղթերը՝ ամենաուշը 10 տարի հետո: "Այսինքն՝ անցած տարվա դրությամբ պետական կառույցները պետք

է գաղտնագերծած լինեին մինչև 2000թ. գաղտնագրված փաստաթղթերը: Այս առումով լուրջ խնդիր կա մեր պետական կառավարման համակարգում",- ասաց նա:

Ստեփանավանի քաղաքապետի դեպքում քաղաքացուն ինֆորմացիա տրամադրելիս յուրաքանչյուր էջի համար գումար է պահանջվել, իսկ Զյուսիսային համալսարանի ռեկտորն անպատասխան է թողել քաղաքացու հարցումը:

ԻԱԿ նախագահի խոսքով՝ ինֆորմացիայի տրամադրման հարցում որոշակի առաջընթաց, այնուամենայնիվ, կա: Նրա ներկայացրած տվյալների համաձայն՝ այս տարվա առաջին եռամսյակում իրենց հարցումների 88 տոկոսին պատասխան տրվել է, մինչդեռ 2006թ. նույն ժամանակահատվածում հարցումներից 55 տոկոսն է պատասխանի արժանացել: ԻԱԿ-ի հարցումներից երկու դեպքում մերժվել է ինֆորմացիա տրամադրելու հարցումը: Երկու դեպքն էլ եղել է պաշտպանության նախարարությունից, սակայն երկու դեպքում էլ պատշաճ հիմնավորում է եղել: Կենտրոնի ղեկավարի խոսքով՝ բազմաթիվ են նաև լուռ մերժումները:

"Ես շատ կուզեմ, որ մի օր որևէ մեկը չհայտնվի այս ցուցակում, բայց դեռ բավական ժամանակ և աշխատանք կա կատարելու",- հայտարարեց Շուշան Դոյրոյանը:

Աղբյուրը՝ www.tert.am

Արձագանքում են "Սև ցուցակում" ընդգրկվածները

Մայիսի 10-ին ԻԱԿ Նախագահ Շուշան Դոյոյանը լրագրողներին ներկայացրեց "Տեղեկատվություն ստանալու իրավունքի պրակտիկան 2011թ.-ի առաջին եռամսյակում", ինչպես նաև հրապարակեց այն պաշտոնյաների անունները, որոնք անպատասխան էին թողել տեղեկություն ստանալու հարցումները: "Սև ցուցակի" հրապարակումից անմիջապես հետո լրագրողները ներկայացրին նաև ցուցակում ընդգրկված պաշտոնյաների եւ կազմակերպությունների մեկնաբանությունները եւ պատասխանները: Այսպես.

"Նովոստի-Արմենիա" գործակալություն

Սև ցուցակում ներառված կառույցների ներկայացուցիչներն ուսումնասիրության արդյունքները մեկնաբանեցին "Նովոստի-Արմենիա" գործակալությանը: Մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Շուշան Հունանյանը ընդունեց, որ գերատեսչությունում բացթողում է եղել աշխատանքային գործընթացում՝ ավելացնելով, որ մեղավորն արդեն պատժված է:

Ստեփանավանի քաղաքապետարանի հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար փորձագետ Նազելի Ավագյանը հերքեց բոլոր մեղադրանքները՝ նշելով, որ Ստեփանավանի քաղաքապետարանն աշխատում է բաց և թափան-

ցիկ, ու ցանկացած տեղեկատվություն կարելի է գտնել Ստեփանավանի քաղաքապետարանի կայքում:

"Հյուսիսային համալսարան" բուհական թերթի գլխավոր խմբագիր Էվելինա Ղանթարյանը գործակալությանն ասաց, որ բուհի ռեկտոր Բորիս Մակիշյանը չի հրաժարվում տեղեկատվություն տրամադրել, այլ պարզապես խնդրել է հիմնավորել հայցը:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունից "Նովոստի-Արմենիա" գործակալությանը խոստացան մեկնաբանել խնդիրը փոքր-ինչ ուշ:

"Մեդիամաքս" լրատվական գործակալություն

Առողջապահության նախարարության՝ տեղեկատվություն չտրամադրողների սև ցուցակում հայտնվելը աշխատանքային բացթողում է: Այս մասին Մեդիամաքս-ին ասել է առողջապահության նախարարության մամուլի քարտուղար Շուշան Հունանյանը:

Նա նշել է, որ Ինֆորմացիոն ազատության կենտրոնի գրավոր հարցմանը չպատասխանելը եղել է աշ-

խատանքային թերացում, իսկ պատասխանատու աշխատակիցը պատժվել է:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2011թ. եռամսյակային հաշվետվության համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը հայտնվել է տեղեկատվություն չտրամադրողների "սև ցուցակի" առաջին հորիզոնականում:

tert.am. Քուշկյանը խոստացավ դուրս գալ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի սև ցուցակից

"Մենք միշտ ինֆորմացիա տրամադրում ենք, այնտեղ տեխնիկական խնդիր է եղել, և մենք խիստ զգուշացում ենք հայտարարել, որ անպայման միշտ սահմանված ժամկետում տրամադրվի տեղեկատվությունը",- լրագրողների հետ հանդիպ-

ման ժամանակ ասել է Առողջապահության նախարարը:

"Առաջին տարին է, որ լսում են՝ մտել են այդ ցանկում, և այս տարի էլ դուրս կգամ",- խոստացավ Հարություն Քուշկյանը:

ՍԵԼ ցուցակի եւ ժանգոտ կողպեքի հզոր ուժը

Կես տարի տեւած համառ պայքարը վերջապես արդյունք տվեց:

2011թ. մայիսի 13-ին՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյ-դոյանի կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաների ՍԵ ցուցակը հրապարակելուց 3 օր անց, Ստեփանավանի քաղաքապետարանը իր իսկ նախաձեռնությամբ ուժը կորցրած է ճանաչել ավագանու այն որոշումը (թիվ 19-Ն), համաձայն որի՝ քաղաքապետարանը տեղեկատվության մեկ էջը տրամադրում էր 500 դրամ վարձավճարով:

Այս մասին news.am-ին 2011թ. մայիսի 13-ին հայտնել է Ստեփանավանի քաղաքապետ պրն. Ղարաքեշիշյանը: Հիշեցնենք, որ հենց այս որոշման համար էր վերջինս ընդգրկվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տարեկան և եռամսյակային "ՍԵ ցուցակներում", ինչպես նաև արժանացել 2010թ. սեպտեմբերի 28-ին Տեղեկատվության ազատության մրցանակաբաշխության "Ժանգոտ կողպեք" մրցանակին:

Ի դեպ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձորի գրասենյակը փորձել էր դատարանով ուժը կորցրած ճանաչել վերոնշյալ որոշումը, սակայն 2011թ. մարտի 24-ին ՀՀ վարչական դատարանը մերժել էր կազմակերպության հայցը և թիվ 19-Ն որոշումը մնացել էր ուժի մեջ:



Եվ միայն ԻԱԿ-ի և մամուլի կոշտ քննադատության շնորհիվ Ստեփանավանի քաղաքապետարանը ստիպված եղավ սեփական նախաձեռնությամբ վերացնել "Քաղաքապետարանում պատճենահանվող որոշումների կրկնօրինակների համար տեղական վարձավճար սահմանելու մասին" թիվ 19-Ն որոշումը:

www.news.am

Հաջող ելքով "Կռիվ"

Ստեփանավանի քաղաքապետարանը դատարանում հաղթեց, բայց վերանայեց հանրության դժգոհությունը հարուցած որոշումը՝ հանրային ճնշման և աղմուկի արդյունքում:

Արամ Չաքարյան, «Առավոտ» օրաթերթ

Մայիսի 4-ին ՀՀ վարչական դատարանը մերժել էր "ՅԵԼԻՆԿՅԱՆ քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի" հայցն ընդդեմ Ստեփանավանի ավագանու որոշման: Այդ որոշմամբ ավագանին քաղաքապետարանում պատճենահանվող որոշումների՝ տեղեկության տրամադրման համար տեղական վարձավճար էր սահմանել՝ մեկ էջի համար 500 դրամ: Համաձայն "Տեղեկատվության ազատության մասին" օրենքի 10-րդ հոդվածի, "հանրային նշանակության կազմակերպություններն իրենք են որոշում տեղեկատվության տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսը": Այլ խոսքով, մեկ էջի համար պատճենահանման գումարը չի կարող 15-20 դրամից բարձր լինել: Այլ խոսքով, մեկ էջի համար 500 դրամ սահմանելով՝ Ստեփանավանի ավագանին խախտել է "ՏԱ մասին" օրենքը: Դատարանը, սակայն, գտել է, որ որևէ խախտում չկա:

Ստեփանավանի ավագանու սույն որոշումը, մեղմ ասած, չեն հավանել ոչ միայն "ՅԵԼԻՆԿՅԱՆ քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակում": Գյուլերիի լրագրողների "Ասպարեզ" ակումբն ու "Ինֆորմացիայի ազատության կենտրոնը" էլ են հարցով մտահոգվել ու փորձել են Ստեփանավանի քաղաքապետարանից ստանալ "500 դրամանոց" որոշումը:

Ստեփանավանի քաղաքապետարանը, սկսած 2010 թվականի փետրվարից, անպատասխան է թողել ԻԱԿ-ի հարցումներն ու արդյունքում ոչ քափանցիկ աշխատելու և "ՏԱ մասին" օրենքը խախտելու համար 2010-ին արժանացել "Ժանգոտ կողպեքի", իսկ այս տարի հայտնվել ԻԱԿ-ի կազմած տեղեկություններ չտրամադրողների "Սև ցուցակում":

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանն էլ հայտարարել էր, թե Ստեփանավանի քաղաքապետը ինֆորմացիայի տրամադրումը դարձրել է բիզնես: Սրան ի պատասխան, Ստեփանավանի քաղաքապետ Սարգիս Ղարաքեշիշյանը ասել է, թե Շուշան Դոյդոյանը զրպարտում է և "կրկնվելու դեպքում կենթարկվի պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով": Նախ նկատենք, որ դատարանն է միայն իրավասու որոշել՝ անձը պետք է պատասխանատվության ենթարկվի, թե՛ ոչ: Իսկ ըստ էության, Ստեփանավանի քաղաքապետը փորձում է թաքցնել իրականությունը, բայց առանձնապես չի հաջողում:

ԻԱԿ-ին մերժած քաղաքապետը, "Ասպարեզ" ակումբին տրամադրել է Ստեփանավանի ավագանու 2009 թվականի մայիսի 6-ի 19-Ն որոշումը, որով քաղաքապետարանում պատճենահանվող որոշումների համար տեղական վարձավճար է սահմանվել՝ մեկ էջի համար 500 դրամ: Նիստին ներկա են եղել ավագանու 11 անդամներից յոթը՝ Արթուր Հովսեփյան, Ռազմիկ Պապյան, Նորայր Ղուկասյան, Արտակ Միրզոյան, Արման Սուքիասյան, Ալեքսան Հովակիմյան: Բոլորն էլ կողմ են եղել: Այսինքն՝ կա նման որոշում, Սարգիս Ղարաքեշիշյանին ոչ ոք չի զրպարտում:

Շուշան Դոյդոյանին զրպարտության մեղադրանք ներկայացնող քաղաքապետը նույն հարցազրույցում հաստատում է 19-Ն որոշման գոյությունը՝ պնդելով, որ 19-Ն որոշումը չեղյալ է հայտարարված: Ուրեմն եղել է, չէ՞, որ չեղյալ է հայտարարվել: Հայտնի ֆիլմի հերոսը ասում էր՝ "հնարավոր չէ սեղմել կրծքին այն, ինչ չկա": Մեր դեպքում՝ "հնարավոր չէ չեղյալ հայտարարել այն, ինչ չկա":

Կրկնենք՝ եղել է մեկ էջ պատճենահանելու համար 500 դրամ գանձելու մասին 19-Ն որոշում, ուրեմն Շուշան Դոյդոյանի պնդումը, որ տեղեկության

տրամադրման համար պատճենահանման շուկայական գնից ամենաքիչը 25 անգամ բարձր գին սահմանելով՝ Ստեփանավանի ավագանին տեղեկության տրամադրումը դարձրել է բիզնես՝ իրական է: Էլ ի՞նչ զրպարտության մասին է խոսում իրեն քննադատողին մեղադրող ու մեկ նախադատություն հետո քննադատության մեջ բերվածը հաստատող քաղաքապետը: Սա Սարգիս Ղարաքեշիջյանի միակ սայթաքումը չէ:

2009թ.-ի սեպտեմբերի 3-ին քաղաքապետը "Ասպարեզ" ակումբի հարցմանն ի պատասխան, նամակով տեղեկացրել է, որ ավագանու 2008թ.-ի բոլոր որոշումները կազմում են 200 էջ և եթե "Ասպարեզը", համաձայն ավագանու 19-Ն որոշման, մեկ էջի համար 500 դրամ վճարի, կստանա իր ակնկալած տեղեկությունը (այս նամակն էլ ասպացուցում է, որ եղել է 19-Ն որոշում: Սա էլ իմիջիայլոց): Նույն քաղաքապետը այս նամակից մեկուկես տարի անց՝ 2011-ի հունվարի 24-ին նույն "Ասպարեզին" տեղեկացնում է, որ 2008-ի որոշումները հանձնվել են արխիվ ու հասանելի չեն, իսկ սկսած 2009-ից, որոշումները տեղադրված են քաղաքապետարանի կայքում: Ստացվում է, որ 2009-ի սեպտեմբերին քաջ գիտակցելով, որ ավագանու 2008թ. որոշումները հանրային հետաքրքրություն են ներկայացնում, Սարգիս Ղարաքեշիջյանը դրանք դարձրել է խորապես անհասանելի:

Կրկին հաջողություն է գրանցվել

Երկու տարի շարունակ հ/կ-ներին չպատասխանող և դատարաններում հարաբերություններ պարզող քաղաքապետը պատասխանել է ԻԱԿ-ին:

Ըստ այդմ, "500 դրամանոց" որոշման ընդունումից հետո որևէ քաղաքացուց կամ կազմակերպությունից գումար չի գանձվել: Սա նշանակում է, որ 500 դրամը իրոք անհավանական մեծ գին է եղել ու բոլորին է վանել: Ստեփանավանի քաղաքապետը տեղեկացրել է նաև, որ որոշումը չեղյալ է հայտարարվել այս տարվա մայիսի 4-ին: Ուշագրավ է, որ "500 դրամանոց" որոշմանը կողմ քվեարկած Ստեփանավանի ավագանու անդամները նույն որոշումը չեղյալ հայտարարելուն էլ են կողմ եղել:

Ստեփանավանի քաղաքապետը պնդում է, որ իրենց պաշտոնական կայքը գործում է 2009 թվականից: Շուշան Դոյրոյանը մեզ հետ զրույցում ասաց, որ եթե կայքը երկու տարի գործեր, իրենք տեղյակ կլինեին: Ամեն դեպքում, "Ինֆորմացիայի ազատության կենտրոնում" դրական քայլ են համարում կայքի գոյությունը, հասցրել են ուսումնասիրել այն ու գոհ են դրա բովանդակությունից:

Շուշան Դոյրոյանն էլ ուրախ է, որ հաջողության են հասել. նախ "500 դրամանոց" որոշումը չեղյալ է հայտարարվել ու աշխատանքի թափանցիկությունն ապահովող կայք է գործում: Սա նշանակում է, որ Սարգիս Ղարաքեշիջյանը թափանցիկ աշխատանքի համար ԻԱԿ-ի "Ոսկե բանալուն" արժանանալու հայտ է ներկայացնում, կեսկատակ նկատեց Շուշան Դոյրոյանը և հավելեց, որ մայիսի 16-ին իրենք մոր հարցում են ուղարկել Ստեփանավանի քաղաքապետարան և ցանկանում են ստանալ "500 դրամանոց" որոշումը չեղյալ հայտարարելու մասին որոշումն ու տեղեկանալ, թե "500 դրամանոց" որոշման գոյության երկու տարիների ընթացքում տեղեկության տրամադրման արդյունքում որքա՞ն գումար է մտել համայնքային բյուջե և ի՞նչ նպատակներով է ծախսվել: Ու հիմա Սարգիս Ղարաքեշիջյանի "փրկության" գործը կախված է Սարգիս Ղարաքեշիջյանից:

Արդիականացվեց ՏԿՆ կայքը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ, արդիականացվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կայքը՝ www.mta.gov.am:



Կայքը պատրաստելիս հաշվի են առնվել ժամանակակից տեխնիկական լուծումները, որոնք թույլ են տալիս մեծ ծավալով տեղեկատվությունն առավել մատչելի դարձնել հանրությանը:

Շնորհանդեսին ներկա ԱՄՆ ՄԶԳ առաքելության փոխտնօրեն Ջոն Սեոնգը նշեց, որ նոր կայքը լիովին համապատասխանում է ինչպես տեղեկատվության մատչելիության միջազգային, այնպես էլ ազգային չափանիշներին, նաև ընդգծեց, որ "Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ջանքերի շնորհիվ զգալի առաջընթաց է նկատվել տեղեկատվության ազատության ոլորտում":

Նորացված վեբ կայքը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել հանրային իրազեկման գործառույթը:

Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը կարևորեց նոր կայքի գործարկումը հանրությանը նախարարության և մարզպետարանների գործունեության, համայնքային բյուջեների կատարողականի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությամբ ապահովելու տեսանկյունից. "Երբ սկսեցինք նախարարության կայքում տեղադրել և հրապարակայնացնել մեր համակարգի վերաբերյալ բազմաթիվ տեղեկատվություն, լուրջ խնդրի առաջ կանգնեցինք. հասկացանք, որ կայքի հնարավորությունները սահմանափակ են և կայքի արդիականացման խնդիր առաջացավ: Այս կայքի գործարկմամբ առավել կանրապնդվի մեր բաց, հրապարակային աշխատանքի ոճը, ինչը նաև հնարավորություն կտա մեր աշխատանքը հասու դարձնել հասարակությանը, ինչպես և ստանալ արծագանքներ, առաջարկներ ու պահանջներ":

"Ինֆորմացիոն ազատության կենտրոն" ՀԿ-ի ղեկավար Շուշան Դոյոյանը կարևորեց այն, որ կայքում հրապարակված են պարտադիր հրապարակման ենթակա բոլոր տեղեկությունները, որոնք կարևոր ու հետաքրքիր են հանրության համար: Կայքում օգտագործողները կարող են ծանոթանալ տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքներին և տեղեկություն ստանալու հարցումներ հարցումներ ուղարկելիս կարող են օգտվել կայքում ներկայացված ձևանմուշից: Կայքը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին առցանց ռեժիմով հետևել իրենց դիմումների և հարցումների ընթացքին:

ՏԿՆ կայքի միջոցով հնարավոր է անցում կատարել մարզպետարանների տեղեկատվական պորտալներ, որոնց բարեփոխման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և կավարտվեն առաջիկայում:

Կայքը մշակել և պատրաստել է "Հելիքս կոնսալտինգ" ընկերությունը:

Սուլպերմարկետները՝ տեղեկատվություն տնօրինողներ

Այսուհետ Հայաստանում գործող հետևյալ 5 սուլպերմարկետները՝ Երևան Սիթի, ՍԱՍ, Ֆրեշ, Սթար և Նոր Ջովք, համաձայն "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի, հաշվետու և հրապարակային պետք է գործեն հասարակության առաջ:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ընդլայնել է գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների ցանկը՝ այսուհետ այդ ցանկում ներառելով նաև մանրածախ առևտրի ոլորտը ներկայացնող կազմակերպություններին:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կատարած ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի՝ 2011թ.-ի հունիսի 8-ի որոշմամբ մանրածախ առևտրի ոլորտում գերիշխող դիրք զբաղեցնող են համարվել "Ալեքս Գրիգ", "ՍԱՍ գրուպ", "Ֆրեշ", "Սթար Դիվայդ" և "Նոր Ջովք" ընկերությունները՝ համապատասխանաբար "Երևան Սիթի", "ՍԱՍ", "Ֆրեշ", "Սթար" և "Նոր Ջովք" խանութների ցանցերով:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են հանրային նշանակության կազմակերպությունները: Նույն հոդվածի համաձայն՝

հանրային նշանակության կազմակերպություն են համարվում նաև ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող ոչ պետական կազմակերպությունները:

Սա նշանակում է, որ Երևան Սիթի, ՍԱՍ, Ֆրեշ, Սթար և Նոր Ջովք խանութները այսուհետ համարվում են տեղեկատվություն տնօրինող և պահանջի դեպքում պարտավոր են "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրել տեղեկություն քաղաքացիներին, սեփական նախաձեռնությամբ հրապարակել նույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:

Այսպիսով, հանրային նշանակություն ունեցող այս ոլորտը նույնպես կարող է տեղեկատվության ազատության շնորհիվ վերահսկվել նաև հենց հասարակության կողմից:

Հիմնադրվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի նախաձեռնությամբ 2011 թվականի մայիսի 1-ին հիմնադրվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդ:



Տեղեկատվական վեճերի խորհրդի հիմնադիր անդամներ են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյ-դոյանը, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, "Առավոտ" օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը, "Արմի քենսալթ" փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն Արա Ղազարյանը, "Արմմեդիա" ծրագրի տնօրեն, ճանաչված լրագրող Մանանա Ասլամազյանը:

Տեղեկատվական վեճերի խորհրդի հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը:

Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտությանը, վիրավորանքին, մասնավոր կյանքի պաշտպանությանը և տեղեկատվության ազատությանը վերաբերող դատական գործերի կապակցությամբ խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացություններով հանդես գալը, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին համապատասխան հարցերի շուրջ անհրաժեշտ խորհրդատվությամբ ապահովելը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը կարծում է, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացություններն ու հայտարարությունները կարող են զսպող դեր խաղալ լրատվամիջոցների դեմ դատական գործերում:

"Տեղեկատվական վեճերի խորհրդի հիմնական նպատակն է հավասարակշռել բախվող արժեքները՝ մի կողմից խոսքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը, մյուս կողմից՝ մարդու արժանապատվությունը և մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքները: Խորհուրդը իր փորձագիտական եզրակացություններով նպատակ ունի կանխել մամուլի դեմ սկսված բացասական դատական պրակտիկայի հետագա զարգացումը",- նշում է ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանը:

Արամ Աբրահամյանն էլ հույս հայտնեց, որ կառույցը հնարավորություն կունենա չմնալ զուտ ֆորմալ մարմին և կլինի այնպես, որ զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ հայցն ընդունելուց կամ որոշում կայացնելուց առաջ դատական մարմինը կդիմի խորհրդին՝ ստանալու մասնագիտական եզրակացություն:

Ռոբերտ Քոչարյանն՝ ընդդեմ "Հրապարակ" օրաթերթի հայցի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը

«Հրապարակ» օրաթերթի 25(695), 31(671), 45(685) համարներում հրապարակված՝ «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում», «Ինքնակոչ ևսամակ Քոչարյանի անունից», «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով եւ ստորագրությամբ» վերտառությամբ հոդվածների վերաբերյալ

1. Գործի հանգամանքները

12.02.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 25(695)-րդ համարում հրապարակվել է «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» վերտառությամբ հոդվածը, այնուհետև դրան հաջորդել են «Հրապարակ» օրաթերթում հրապարակված ևս երկու հոդվածներ՝ «Ինքնակոչ ևսամակ Քոչարյանի անունից», «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով և ստորագրությամբ» վերնագրերով հոդվածները (22.02.2011թ./31(671)/ և 12.03.2011թ./45(685)/):

Վերոգրյալ հոդվածներում տեղ գտած՝ պատիվն ու արժանապատվությունը արատավորող, վիրավորող և զրպարտող տեղեկությունների հերքման և վնասի հատուցման պահանջի հայցով 2011թ. մարտի 25-ին ՀՀ երկրորդ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը դիմել է ընդհանուր իրավասության դատարան: Հայցադիմումում ներկայացվել են համապատասխան հոդվածների այն հատվածները, որոնք հայցվորը դիտել է որպես վիրավորանք և զրպարտություն պարունակող: Գործը գտնվում է դատաքննության նախապատրաստական փուլում:

2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածները և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համա-

ձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն. «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կի-

նենատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հողվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյո՞ք զանգատի առարկա միջամտությունը բխում է «հրատապ հասարակական կարիքից», արդյո՞ք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», և արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»¹:

4. Վիճարկվող հողվածների իրավական վերլուծությունը

Վիճարկվող հողվածների, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջների վրա:

4.1. «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» վերտառությամբ հողվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան վկայում է այն մասին, որ նման փաստական հանգամանքներով գործեր քննելիս, Դատարանը հաշվի է առնում հրապարակման առարկա հանդիսացող խնդրի հանրային նշանակությունը, նպատակը և շեշտադրումը, ընդհանուր համատեքստը, հայցվորի և պատասխանողի կարգավիճակը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր հանգամանքներ, որոնք կներկայացվեն ստորև:

Վիճարկվող հողվածով վեր են լուծվում Հայաստանի քաղաքական կյանքում առանցքային դեր ունեցող քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների ներքին փոխհարաբերությունները և ազդեցության շրջանակները, ինչը հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող և հանրային նշանակություն ունեցող թեմա է: Ավելին, այս հրապարակումը արվել է նաև Հայաստանի ներքաղաքական կյանքում նախապատահատվող քաղաքական իրադարձության, այն է՝ ՀՀ իշխող կուսակցությունների միջև ստորագրվելիք կոալիցիոն հուշագրի շուրջ քննարկումների լույսի ներքո, ինչը կրկին հաստատում է խնդրի առնչությունը հանրային շահերին: Հողվածը պարունակում է նաև անմիջականորեն ՀՀ երկրորդ Նախագահ Ռ. Քոչարյանին ուղղված քննադատական արտահայտություններ, որոնք նրա կողմից վիճարկվել են դատարանում, մասնավորապես.

4.1.1. «... Ստրով ինչ անցներ, թե Քոչարյանը անցուդարձին չի դիմանա և իր անմտությամբ ասպարեզ կիջնի...»: «Իսկ Քոչարյանը, որքան էլ առանձնանում է գավառականությամբ ու արյունռուշտությամբ, առանձնակի փայլում է անմտությամբ: Ուղղակի մտածում ես՝ ՀՀ նախագահի աթոռում թյուրիմացաբար հայտնված այդ եակին մտածելու մարդկային ունակություն ի վերուստ տրված է, թե՛ չէ: Ինչպես մի երկու տարի առաջ դատարկախոսել էր՝ իբր աֆրիկյան սաֆարիում որսորդների հետ կենդանիներից է շատախոսել, երբ ինքն ուղղակի չգիտի ոչ մի լեզու, որով աֆրիկյան մայրցամաքում կարելի է մարդկանց հետ հաղորդակցվել, այժմ էլ՝ ոչ ավել, ոչ պակաս, հայտարարեց, թե իբր ՀՀԿ ղեկավարները, ողջ թե մահացած, մի այնպիսի ոչնչություն էին, որ կուսակցության նախընտրական ցուցակները անուն առ

1. Sunday Times-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 1), 62-րդ պարբերություն:

անուն իր հետ էին համաձայնեցնում»։ «Եթե 2007-ին Քոչարյանն իբր այնպիսի ազդեցություն ուներ, որ անուն առ անուն ՀՀ-ի ցուցակ էր ստուգում, մի կուսակցություն էլ (ՀՀԴ-ն) ուղղակի գրպանում էր պահում, երրորդ կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը որտեղի՞ց էր ծագել։ Եթե ՀՀԴ-ն ու ՀՀԴ-ն իր վերահսկողության տակ էին, ո՞ւմ կամ ինչի՞նչ էր վստահում, որ իր բիզնես-պրոյեկտ ԲՀԿ-ն էր ասպարեզ իջեցնում։ Միանգամայն հասկանալի է, որ ինքը ոչ մեկին էլ չի վերահսկել, ոչ մեկին էլ չի վստահել, դրա համար էլ ճոր ուժ է ստեղծել ի դեմս ԲՀԿ-ի։ Իսկ եթե տեղապահի մտքով կանցնի ճամարտակել՝ իբր ԲՀԿ-ն ինքը չի ստեղծել՝ գաղափարից մինչև կառույց ու անդամագրված անձինք, թող նման հեքիաթներն իր հայրենի եզերքի հավերհին ու սագերին պատմի»։ «Երևի տեղապահ Քոչարյանը ոչ միայն մտքի, այլև՝ հիշողության կարճության խնդիր ունի։ Երևի չի հիշում, թե 2003-ի նախագահական ընտրություններում ինքն ինչ ողորմելի վիճակում էր»։

Վերոնշյալ արտահայտությունների իրավաչափության վերաբերյալ եզրակացության հանգելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել դրանց բնույթի վերաբերյալ։ Արտահայտվելու ազատության իրավունքի խախտումների վերաբերյալ գործերով Եվրոպական դատարանը տարանջատում է կատարում փաստերի և գնահատողական դատողությունների միջև՝ համարելով, որ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունները ապացուցելի չեն. գնահատողական դատողությունների ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են համոզմունքների, նախապատվությունների ոլորտին։ Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ գնահատողական դատողության և դրա փաստական հիմքի միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից²։

Մատնանշված արտահայտությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանք հողվածի հեղինակի կողմից արված գնահատողական դատողություններ են։ Որպես այդպիսիք՝ դրանք զուրկ չեն որոշակի փաստական հիմքից, այն է՝ Ռ. Քոչարյանի կողմից տարբեր ժամանակներում ար-

ված հայտարարություններից և հանրային տիրույթում շրջանառվող լուրերից, կարծիքներից և ասեկոսներից։ ՄԻԵԴ-ը նաև սահմանել է, որ «հանրային հսկող շան» իրենց դերը կատարելիս՝ լրատվամիջոցների լուսաբանումը «պատմությունների» կամ «ասեկոսների» կամ «հանրային կարծիքի» լույսի ներքո պետք է պաշտպանվի, եթե այն լիովին անհիմն չէ³։

4.1.2. «Իհարկե, այնպիսի դավաճանության, պետական ու տնտեսական հանցագործությունների ու, ամենակարևորը՝ արյան մեջ թաղված կենսագրություն, ինչպիսին իրենն է, այս երկրագնդի վրա հատուկեցնող արարածներ են ունեցել։ Նման գարշելի կենսագրությունները սովորաբար միայնակ էլ կերտում են»։

Ինչ վերաբերում է վերոհիշյալ ձևակերպմանը, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո համարում ենք այն խնդրահարույց հետևյալ պատճառաբանությամբ.

Վերը նշված արտահայտությունը կարող է դիտվել որպես փաստերի շարադրանք (statement of fact), որով ՀՀ երկրորդ Նախագահը մեղադրվում է որոշ հանցագործությունների կատարման մեջ։ ՄԻԵԴ-ը իր կողմից քննած գործերից մեկում նշել է.

“Չողվածը գրված է այնպիսի եղանակով, որ ընթերցողի մոտ որևէ կասկած չի թողնում հրապարակված նյութի ճշմարտացիության մասին և ոչ էլ որևէ հղում է արվել աղբյուրի վրա։ Հետևաբար, չի կարելի ասել, որ լրագրողը...-զուտ տեղեկացրել է այն մասին, ինչ խոսում էին այլոք և որ նա զուտ կատարել է այդ տեղեկության վկայակոչում՝ իր անձը հեռու պահելով դրանից։ Ընդհակառակը, վիրավորական բնույթի պնդումները նա ներկայացրել է որպես իր սեփական պնդումներ և, հետևաբար, ընկերությունը, որը հրապարակել է դրանք, պատասխանատվություն է կրում դրանց ճշմարտացիության համար”⁴։

2. Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի, թիվ 29032/95, 86-րդ պարբերություն։
 3. Թորգեր Թորգերսոնն ընդդեմ Իսլանդիայի, թիվ 13778/88, 25 հունիս 1992թ. վճիռ, 65-րդ պարբերություն։ Չի-հան Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 17095/03, 28-րդ պարբերություն։
 4. Europapress Holding D.O.O.-ն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 25333/06, 22/10/2009, պարբ. 60։

Փաստերի շարադրանք պարունակող արտահայտությունների հետ կապված ՄԻԵԴ-ի միանշանակ դիրքորոշումը հետևյալն է.

«Արտահայտվելու ազատությունը ենթադրում է պարտավորություններ և պատասխանատվություն և 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները»⁵: Ըստ այդմ, նմանատիպ գործերով պատասխանողից պահանջվում է ներկայացնել ապացույցներ հաստատելու իր պնդումները, այդ թվում՝ դրանց լայնորեն հայտնի փաստ լինելու հանգամանքը, ինչպես նաև լրագրողի կողմից անկախ ուսումնասիրություն կատարելու հանգամանքը: ՄԻԵԴ-ի ձևավորված դիրքորոշման համաձայն՝ մինչև մամուլի դերը, անկասկած, ենթադրում է իրազեկման պարտականություն հանրային շահին վերաբերող հարցերում, կոնկրետ անձանց ուղղակիորեն մեղադրելը՝ նրանց անունների ու պաշտոնների մատնանշմամբ, պարտավորեցնում է պատասխանողին ներկայացնել իրենց պնդումների համար բավարար փաստական հիմքեր⁶:

ՄԻԵԴ-ի դիրքորոշումը նաև այն է, որ իրավասու մարմնի կողմից քրեական մեղադրանքը հիմնավորելու ապացուցման չափորոշիչը հազիվ թե կարելի է համեմատել այն չափորոշիչի հետ, որը պետք է պահպանվի լրագրողի կողմից հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ իր պնդումներում⁷: Յետևաբար, վերոհիշյալ արտահայտության վերաբերյալ վերջնական եզրակացությունը կախված կլինի պատասխանողի կողմից դատարանում ներկայացվելիք հիմնավորումներից:

4.2.«Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից», «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով և ստորագրությամբ» վերտառությամբ հոդվածների վերաբերյալ

Նշված հոդվածներից հայցադիմումում մեջ են բերվել հետևյալ արտահայտությունները.

«Յետևաբար իմաստ չունի վկայակոչել այն ինչ գոյություն չունի՝ Քոչարյանի բարի համբավ: Ավելի գործնական կլինի օրենքի պահանջը բավարարել՝ հայտարարել, թե Քոչարյանը զբաղվում է գործարարությամբ, ունի գործարար համբավ, հոդվածն էլ դրան վնասել է: Կամ էլ համբավի թեման թողնել հանգիստ:....»

«... Պարզ է, որ կյանքում Քոչարյանին անձնագիր պետք չի գալիս, արտերկիր էլ երևի մեկնում է դիվանագիտական անձնագրով: Բայց ինչ արած ... անողոք իրականություն է՝ անձնագրի ուժը կորցնելուց երեք տարի անց հնարավոր չէ այդ անձնագրով քաղաքացիական հարաբերություն ստեղծել և լիազորություններ տալ: Այնպես, որ 1998-ին անձնագիր ստանալուց և ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելուց հետո այժմ էլ երկրորդ անգամ պետք է պրն Քոչարյանը դիմի՝ անձնագիրը փոխի և ուժի մեջ համարվող անձնագրով լիազորագիր տա, որպեսզի կարողանա իր հոդվածի հերքում պահանջել (կամ էլ կարող է անձամբ պահանջել՝ անձնագիրը թողնելով մի կողմ):....»

«... գոնե այս երկրի անունը, որի քաղաքացին, էլ չասած նախագահին ես եղել, պետք է գրել կարողանալ կամ սխալ գրված լինելը նկատել թղթին ստորագրություն դնելուց առաջ:...»:

Վերոնշյալ արտահայտությունների, որպես գնահատողական դատողությունների, իրավաչափության վերաբերյալ ամբողջովին կիրառելի է եզրակացության 4.1.1. կետում ներկայացված վերլուծությունը:

5. Վերաբերելի սկզբունքներ

ՄԻԵԴ-ը տարիներ շարունակ ընդգծել է, որ մամուլը յուրահատուկ տեղ է զբաղեցնում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության համակարգում,

5. Radio France-ն ու այլոք ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 53984/00, պարբ. 37: Մահմուդովն ու Աղազադե Վ-ն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 35877/04, 44-րդ պարբերություն:

6. Նույն տեղում, 45-րդ պարբերություն, Կամպանայի ու Մազարեյի գործով վճիռը, Mazare, 101-րդ պարբերություն, Լեսնիկն ընդդեմ Սլովակիայի, թիվ 35640/97, 57-րդ պարբերություն:

7. Դյունդինս ընդդեմ Ռուսաստանի, թիվ 37406/03, 36-րդ պարբերություն:

քանի որ մամուլը ոչ միայն իրավունք, այլ պարտավորություն ունի տեղեկություններ և գաղափարներ տարածելու հանրային շահին վերաբերող ցանկացած հարցի շուրջ, իսկ հանրությունն իրավունք ունի դրանք ստանալու⁸: Բացի այդ, «լրագրողական ազատությունը ներառում է նաև չափազանցության և նույնիսկ սադրանքի որոշակի աստիճան»⁹: Եվ վերջապես, սանկցիայի կիրառման հանդեպ ունեցած վախը, ըստ ՄԻԵԴ-ի, «սառեցնող ազդեցություն» ունի արտահայտվելու ազատության իրականացման վրա¹⁰:

ՄԻԵԴ-ը, այնուհետև, հետևողականորեն պնդել է, որ «ընդունելի քննադատության սահմանները շատ ավելի լայն են քաղաքական գործչի պարագայում, քան մասնավոր անձի: Ի տարբերություն վերջինիս՝ առաջինն անխուսափելիորեն և գիտակցաբար բաց է իր յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման առջև ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորի հանդուրժողականության առավել բարձր աստիճան»¹¹: Բացի այդ, ՄԻԵԴ-ի համար խիստ կարևոր է նաև, թե իրապարակումը որքանով է ազդել քննադատության թիրախ դարձած գործչի քաղաքական կարիերայի և մասնագիտական կյանքի վրա¹²:

Վերջապես, միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցումը պահանջում է, որպեսզի պահանջվող փոփոխությունները չափը որոշելիս ներպետական դատարանները հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Մասնավորապես՝ Ռոմանենկոն և այլքը ընդդեմ Ռուսաստանի գործում ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրան-

ցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ, դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և հետևաբար եղել են անչափ խիստ¹³:

Սույն գործով հայցվորի կողմից պահանջվող փոփոխությունն ու դատական ծախսերի չափը չի բխում միջամտության համաչափության պահանջից, ենթադրաբար գերազանցում է գործում ներգրավված լրատվամիջոցի եկամուտները, իսկ փաստաբանական ծառայությունների դիմաց պահանջվող վարձատրությունը ակնհայտորեն չի համապատասխանում ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ առաջադրվող խելամտության պահանջին, այլ նաև այս հարցի շուրջ ՀՀ փաստաբանների պալատի վերջերս արտահայտած դիրքորոշմանը¹⁴:

6. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, իրապարակումների մեջ տեղ գտած գնահատողական դատողությունների մասով, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, իսկ որոշ վիճահարույց արտահայտությունների մասով միջամտության անհրաժեշտությունը կախված կլինի պատասխանողի կողմից ներկայացվելիք հիմնավորումներից:

Խորհուրդը գտնում է, որ իրապարակված որոշ գնահատողական դատողություններ չեն բխում պատասխանատու եւ բարեխիղճ լրագրության չափանիշներից: Լրատվամիջոցը կարող էր նույն միտքն արտահայտել այլ, նվազ արատավորող բնույթի արտահայտություններ գործածելով: Հետևաբար, նման պարագայում արտահայտվելու ազատության միջամտության անհրաժեշտությունը

8. Observer and Guardian-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 13585/88, պարբ. 59:
9. Դե Հասեն ու Գիչսելսն ընդդեմ Բելգիայի, թիվ 19983/92, պարբ. 37– 46:
10. Լոմբարդոն ու այլքը ընդդեմ Մալթայի, թիվ 7333/06, 61-րդ պարբերություն:
11. Լինգենսն ընդդեմ Կվստրիայի, դիմում 9815/82, պարբ. 42:
12. Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 23472/03, պարբ. 33:
13. Ռոմանենկոն ու այլքը ընդդեմ Ռուսաստանի, թիվ 11751/03, պարբ. 48:
14. Տես, օրինակ, www.Iragir.am 17/04/2011 «Ռոջամտության չափն ու սահմանը»:

www.foi.am

նը կախված կլինի դատաքննության ընթացքում պատասխանող լրատվամիջոցի ներկայացվելիք հիմնավորումներից:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը, գնահատելով վիճարկվող հոդվածները եւ հայցադիմումում մեջ բերված արտահայտությունները ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջների համատեքստում, գտնում է, որ «Հրապարակ» օրաթերթում հրապարակված հոդվածներն առնչվում են հանրային շահին, իսկ դրանցում առկա հայտարարությունները գնահատողական դատողություններ են եւ ոչ՝ փաստական տվյալներ: Հետեւապես, ակնկալում ենք, որ Դատարանը կկիրառի առավել բարձր չափանիշներ արտահայտ-

վելու ազատության միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս:

Խորհուրդը գտնում է նաեւ, որ հայցվորի կողմից պահանջվող փոխհատուցման չափը չի բխում արտահայտվելու ազատության միջամտության համաչափության պահանջից, ենթադրաբար գերազանցում է գործում ներգրավված լրատվամիջոցի եկամուտները, ինչպես նաեւ փաստաբանական ծառայությունների դիմաց հայցվորի պահանջած վարձատրությունը ակնհայտորեն չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ առաջադրվող խելամտության պահանջին:

«ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» օրաթերթի» գործի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունը

«Երկիր» օրաթերթի 13.01.2011թ. 3/2326-րդ համարում հրապարակված՝ «131 դեմք ու դիմակ» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ)

1. Գործի հանգամանքները

13.01.2011թ. «Երկիր» օրաթերթի 3/2326-րդ համարում հրապարակվել է «131 դեմք ու դիմակ» վերտառությամբ հոդվածը, որը վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին: Վերոնշյալ հոդվածում տեղ գտած՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու և պատճառված վնասը փոխհատուցելու պահանջի հայցով Ս. Արզաքանցյանը 11.02.2011թ. դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: 08.06.2011թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սույն գործով կայացրել է վճիռ, որով Ս. Արզաքանցյանի հայցը բավարարվել է մասնակի:

2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...»:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափար-

ներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն. «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...»:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավոր-

վել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով”:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է “իրատապ հասարակական կարիքից”, արդյոք այն համաչափ է իր առջև դրված “իրավաչափ նպատակին” և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները “վերաբերելի են և բավարար”:

4. Վիճարկվող հոդվածի իրավական վերլուծությունը

Վիճարկող հոդվածի, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի պահանջների վրա:

4.1. “131 դեմք ու դիմակ” վերտառությամբ Տիգրան Արզաքանցյանին վերաբերող հոդվածի վերաբերյալ

Ընդհանուր համատեքստը և հոդվածի հանրային նշանակությունը. Վիճարկվող հոդվածը պատկանում է “Երկիր” օրաթերթի “131 դեմք ու դիմակ” խորագրով հոդվածների շարքին, որոնցով օրաթերթը նպատակ է ունեցել հասարակությանը տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի 131 պատգամավորներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Մինչ Տ. Արզաքանցյանին նվիրված վիճարկվող հոդվածի հրապարակումը՝ վերոնշյալ շարքում արդեն հրապարակվել էին թվով 17 ԱԺ պատգամավորների վերաբերող հոդվածներ: Համապատասխան խորագրով հոդվածների շարքը շարունակվել է նաև Տ. Արզաքանցյանի վերաբերյալ հրապարակումից հետո, ինչը վկայում է տվյալ հոդվածաշարը հրապարակելու լրատվամիջոցի նպատակի և դրա հանրային նշանակության մասին: Վիճարկվող հոդվածով ներկայացվում են պատգամավորի կենսագրության որոշ տվյալներ, նրա աշխատանքային պարտականությունների կատարման, զույքային դրության, կենսաոճին ու որոշ նախասիրություններին վերաբերող տեղեկություններ:

Նշված տեղեկությունները, անշուշտ, ներկայացնում են հանրային հետաքրքրություն, հաշվի առնելով, առաջին հերթին, հայցվորի կարգավիճակը, նրա՝ որպես ընտրովի պաշտոնատար անձի և քաղաքական գործչի գործունեության բնույթը, ինչպես նաև պետական բյուջեի միջոցներից վճարվելու հանգամանքները:

Հոդվածի շարադրման ընդհանուր ոճը և երանգավորումը. Հոդվածն ընդհանուր առմամբ շարադրված է հունորային ոճով և երանգավորմամբ, ինչը արտահայտվելու ազատության իրավունքի լրացուցիչ պաշտպանություն է ենթադրում, քանի որ այս ոճն ինքնին ենթադրում է որոշակի չափազանցություն: Հոդվածը պարունակում է ՀՀ ԱԺ պատգամավոր Տ. Արզաքանցյանի վերաբերյալ հետևյալ արտահայտությունները, որոնք վերջինս վիճարկել է նաև դատարանում.

4.1.1. “Այս պատգամավորը առաջին անգամ խորհրդարան մտավ որպես ստիլյազ”։ “Բրենդային իր հագուստների, կոշիկների մասին խոսում էր բոլորի հետ և շարունակ գլուխ էր գոլում, թե ինչպես է ինքնաթիռներով գեղեցկուհիներ բերում ու տանում այս կամ այն երկիր”։

“Չայտնի է նաև որպես “կազինոների” մշտական հաճախորդ”։ “Շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի”։ “Ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է և չի հաճախում ԱԺ նիստերին”։ “Անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երևացել Ազգային ժողովի միջանցքներում”։ “Տիգրան Արզաքանցյանը իր խոսքում շարունակ մեջբերումներ է անում մոր խոսքերից”։

“Չայտնի է, որպես ռուս երգչուհիների համար ինքնաթիռ վարձող և այստեղ-այնտեղ, այդ թվում՝ Չայաստան տանող-բերող գործարար”։ “խոսում է մի քանի օտար լեզվով, բայց առավել հասկանալի խոսում է հայրենի քրավառաբարբառով”։

Տեղեկատվական վեճերի խորհուրդը անհրաժեշտ է համարում տարանջատում կատարել հողվածում տեղ գտած փաստերի և գնահատողական դատողությունների միջև։ Ըստ եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունները ապացուցելի չեն. գնահատողական դատողությունների ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են համոզմունքների, նախապատվությունների ոլորտին։

Միննույն ժամանակ ՄԻԵԴ-ը նշել է, որ գնահատողական դատողություն արտահայտելու իրավունքը բացարձակ չէ և որ նման դատողության հիմքում պետք է ընկած լինեն որոշ փաստական հիմքեր։ Այդ փաստական հիմքերի և դատողության միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից, հետևաբար, խնդիրը կայանում է նրանում, թե արդյոք տվյալ գնահատող դատողության համար առկա են եղել բավարար փաստական հիմքեր։

Վերոնշյալ արտահայտությունները գնահատողական դատողություններ են կամ փաստական տվյալներ, որոնք որպես այդպիսին զուրկ չեն փաստական հիմքերից։ Դրանք հիմնված են բավարար

փաստական հիմքերի վրա, այն է՝ պատգամավոր Տ. Արզաքանցյանի սեփական հայտարարությունների, հարցազրույցների, այլ լրատվամիջոցներում հրապարակված մի շարք հողվածների ու տեղեկատվության, ինչպես նաև պաշտոնական տեղեկատվության հիման վրա։

4.1.2. Հրանտ Բագրատյանը, երբ “Պեմնո Ռիկարում” էր աշխատում, մի առիթով ասել է. “էդ լակոտը մեր կոնյակի պատիվը զցում է Ռուսաստանում”։ Ինչ վերաբերում է վերոգրյալ մեջբերմանը, ապա այն մի կողմից պարունակում է վիրավորական արտահայտություն (“լակոտ” արտահայտությունը), իսկ մյուս կողմից նշված արտահայտությունը հրապարակվել է չակերտների մեջ, որը նշանակում է, որ արտահայտությունը հանդիսանում է մեջբերում այլ անձի կողմից կատարված հայտարարությունից։ Նման պարագայում էական է, թե արդյոք լրագրողը ցույց է տալիս այն աղբյուրը, որտեղից օգտվել է մեջբերումը կատարելիս։ Դա պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասով հիմքով սահմանված իրավական պաշտպանության միջոցով, ըստ որի անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին)։

Թեև ապացուցման բեռը նման հանգամանքներում պատասխանողի վրա է, սակայն հայցվորն իր վրա է վերցրել ապացուցման բեռը և դատարան ներկայացրել Հրանտ Բագրատյանի ստորագրությամբ գրավոր հայտարարություն, որով վերջինս հերքել է նման հայտարարություն կատարած լինելու փաստը։ Ի պատասխան, լրագրողը չի վկայակոչել որևէ աղբյուր, որտեղից կատարել է մեջբերումը։ Սա ինքնին նշանակում է, որ մեջբերումը կատարվել է անբարեխիղճորեն։ Նման հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ արժանապատվությունը արատավորելու նպատակային տարրի առկայու-

թյունը պնդելու համար, որը “վիրավորանք” հասկացության բաղկացուցիչ մասն է՝ ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի:

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կառուցակարգը, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, լրագրողից չի պահանջում յուրաքանչյուր դեպքում կատարել վկայակոչումներ տեղեկատվական աղբյուրի մասին: Դա լրջորեն կվնասի լրատվական նյութի որակը և լրագրողական ազատությունը: Ավելի հաճախ բավարար է ներկայացնել այլ անձի հրապարակային հայտարարության կամ հայտարարությունների վերարտադրումը, որը, բարեխիղճ կատարելու դեպքում, հնարավոր կլինի հեշտությամբ հիմնավորել՝ ներկայացնելով, օրինակ, նախկինում հրապարակված մի շարք լրատվական նյութեր տվյալ երևույթի կամ դեպքի մասին: Հենց այդ պաշտպանությունից էլ հաջողությամբ օգտվել է լրատվամիջոցը վերևում շարադրված բազմաթիվ գնահատական-դատողությունները հիմնավորելու համար, որն էլ ընդունել է դատարանը: Սակայն իրավիճակն այլ է, երբ լրագրողը կատարում է մեջբերում: Նման հանգամանքում լրագրողը, գիտակցաբար իր վրա վերցնելով պատասխանատվության ավելի մեծ բեռ, իրեն դնում է այնպիսի իրավական հարթության մեջ, որտեղ իրավական պաշտպանության միջոցներն ավելի սահմանափակ են:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ “Երկիր” օրաթերթի փետրվարի 5-ի համարում հրապարակված Հ. Բագրատյանի վերոնշյալ հայտարարությունը չի կարող համարվել պատշաճ հերքում, քանի որ չի համապատասխանում օրենքով սահմանված հերքմանը առաջադրված պահանջներին:

5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, հրապարակումների մեջ տեղ գտած գնահատողական դատողությունների, փաստերի

շարադրանքի մասով, անհրաժեշտ չէ

ժողովրդավարական հասարակությունում, իսկ Հ. Բագրատյանի կողմից արված հայտարարությանը հղում կատարելու մասով (որը պարունակում է “լակոտ” վիրավորական արտահայտությունը)՝ միջամտությունը պետք է խիստ համաչափ լինի

հայցվորի պատվին ու արժանապատվությանը հասցված վնասին՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, լրատվամիջոցի գույքային դրությունը, ինչպես նաև փոխհատուցման չափը գնահատելիս ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայում մշակված այլ սկզբունքները:

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով հայցվորի կողմից պահանջվող 3,000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով փոխհատուցման պահանջը վիրավորանքի և գրպարտության դիմաց չի բխում միջամտության համաչափության և անհրաժեշտության սկզբունքներից:

Ինչ վերաբերվում է դատարանի կողմից սահմանված 200.000 ՀՀ դրամի չափով բարոյական վնասի դրամական փոխհատուցմանը, ապա սույն գործի հանգամանքների ներքո նշված փոխհատուցումն անհամաչափ է և դատարանը կարող էր բավարարվել լրատվամիջոցին՝ ներողություն հրապարակելուն պարտադրելով Հ. Բագրատյանի կողմից արված հայտարարությանը հղում կատարելու մասով (որը պարունակում է “լակոտ” վիրավորական արտահայտությունը): Հետևաբար, վճռով իրավունքի խախտման փաստի արձանագրումը ինքնին արդարացի փոխհատուցման բավարար միջոց է: Իսկ ինչ վերաբերվում է դատական ծախսերի հիմքով սահմանված փոխհատուցման չափին, ապա սույն գործի հանգամանքների ներքո դա կարելի է համարել ողջամիտ:

"Լակոտը" 200 հազար դրամ արժե՞

Անցյալ տարվա մայիսից մինչ օրս ՀՀ-ում ՁԼՄ-ների նկատմամբ 14 դատավճիռ է կայացվել: Հայցերը ներկայացրել են բացառապես քաղաքական գործիչները: "Այսօր 14 վճիռ է կայացվել, սակայն այն վաղը կարող է դառնալ 15 կամ 16: Քաղաքական գործիչները, քանի որ նրանք զբաղեցնում են պետական պաշտոններ, օգտվում են պետական, հանրային միջոցներից, ծախսում են դրանք և, հետևաբար իշխանական լծակներ ունենք, նրանք պարտավոր են առավել հանդուրժող վերաբերվել իրենց հասցեյին հնչած քննադատություններին", - "Ա1+"-ի հետ զրույցում ասաց "Ինֆորմացիայի ազատության կենտրոնի" ղեկավար Շուշան Դոյոյանը:

Փաստն այն է, որ քաղաքական գործիչները ոչ միայն հանդուրժող չեն իրենց հասցեյին հնչող քննադատություններին, այլև վրեժխնդիր են լինում: Օրինակ՝ Աժ պատգամավոր Տիգրան Արզաբանյանն "Երկիր" օրաթերթից վիրավորվել է "Ստիլյագա, քյավառա բարբառով խոսող, լակոտ" եւ այլ բառերի համար: "Դատարանը հայցը մերժել է "Ստիլյագա, քյավառա բարբառով խոսացող, ծեծի սովոր, կազինոների մշտական հաճախորդե մասերով: Դատարանը պատգամավոր հայցը բավարարել է ընդամենը մեկ մասով՝ "լակոտ" բառի համար, և հաշվարկել, որ այդ վնասը կազմում է 200 հազար դրամ", - ասաց տիկին Դոյոյանը:

Այսինքն՝ ՁԼՄ-ն կարող է 200 հազար դրամ տալ եւ ցանկացած պատգամավորի լակոտ անվանել. "Ա1+"-ի հարցին՝ տիկին Դոյոյանը պատասխանեց. "Ստացվում է այդպես, սակայն այստեղ ավելի գլոբալ խնդիր կա: Նման վճիռները, որոնք կայացնում են ՁԼՄ-ների դեմ, ունենում են հսկայական բացասական ազդեցություն: Այսինքն՝ ՁԼՄ-ներին որոշակի զսպաշապիկ են հագցնում, եւ դրանից հետո ՁԼՄ-ները սկսում են մտածել՝ գրե՞ն, թե՞ ոչ այդ մասին":

Տիկին Դոյոյանն ընդգծեց, որ այսօր ՀՀ-ում հետապնդումների են ենթարկվում հատկապես ընդդիմադիր ուղղվածություն ունեցող թերթերը. "Այդ բոլոր գործերը վաղ, թե ուշ հասնելու են Մարդու իրավունքների եվրոպական դատարան, իսկ դատարանը խիստ կարևորում է այն հանգամանքը,

թե հայցվոր կողմը սովորական քաղաքացի է, թե պաշտոնյա":

Միաժամանակ տիկին Դոյոյանը նշեց, որ լրագրողը նույնպես պետք է հետևեր "Լրագրողի էթիկայի կանոններին". "Բոլոր դեպքերում ես պաշտոնյաներին կոչ կանեի այդ վեճերը լուծել արտադատական կարգով: Գոյություն ունի էթիկայի խորհուրդ, Տեղեկատվական վեճերի խորհուրդ: Նման արտադատարանական մարմինները շատ լավ մեխանիզմներ են, որոնք պաշտոնյաներին հնարավորություն են տալիս իրենց վեճերը լուծել ՁԼՄ-ների հետ, եթե, իհարկե, նպատակ չունեն վրեժխնդիր լինել այս կամ այն ՁԼՄ-ից":

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ պատգամավորներն են վիրավորում, խոչընդոտում լրագրողների գործունեությունը, մասնավորապես Ռուբեն Հայրապետյանի կողմից "Չետք" և այլ ՁԼՄ-ների լրագրողներին հայտնելն ու վիրավորելը, ապա տիկին Դոյոյանն ասաց, "Այդ բոլոր դեպքերը դիտարկվում են որպես լրագրողի աշխատանքը խոչընդոտում, որը Քր. օր 164 հոդվածով պատժելի արարք է: Պետք է հետամուտ լինել, որ բոլոր նման դեպքերում, երբ կա լրագրողի դիմումը, հարուցվեն քրեական գործեր: Երբ լրագրողը դիմում է քաղաքացիական ընթացակարգով՝ պաշտպանելու իր պատիվն ու արժանապատվությունը, կոնկրետ "Չետքի" լրագրող Գրիշայի պարագայում, ամբողջ լրագրողական հանրությունը պետք է կանգնի նրա կողքին":

Աղբյուրը՝ Ա1+

The Freedom of Information Center of Armenia celebrates its 10th anniversary

On July 1st, 2011 the “Freedom of Information Center of Armenia” non-governmental organization (FOICA) celebrates its 10th anniversary. The main mission of the FOICA is to protect citizens’ right to know.

During the past 10 years the FOICA managed to open hundreds of closed official doors and to make thousands of official documents public. In 2001-2011 the Center provided 6200 people with legal consultations and assistance. In 2006-2010 the FOICA brought 28 court cases with 90% positive outcome against those state governance and local self-government bodies which illegally denied information requests. As a result, FOICA has restored the violated rights of people. In these years FOICA published hundreds of articles, dozens of books, guides, handbooks on freedom of information. FOICA has played an active role in the elaboration and adoption of RA law on “Freedom of information”.

Organizing countrywide trainings for citizens and representatives of NGOs and mass media, as well as state officials, the center helps to improve their knowledge in the sphere of freedom of information. During 2003-2011 5300 people, including 2500 officials received skills and knowledge on the legislation on freedom of information. “Annually, the center submits 1000 FOI requests to state bodies and self-governing bodies, thus being one of the most active users of the RA law on “Freedom of information””, - says Shushan Doydoyan, the president of the FOICA.

Since 2001 the center runs a country-wide public education campaign aimed at raising public awareness on th access to information issues. The FOICA publishes the “You have the right to know” Bulletin which is the only Armenian periodical specialized in freedom of information. Each issue of the bulletin contains a “black-list” of those officials who have violated the access right of citizens, journalists,



NGOs and juridical persons. The FOICA widely publicizes violations of the right to access to information with mass media.

The FOICA implements a number of activities aimed at establishing new electronic government mechanisms in the government system. They are also aimed at improving those mechanisms, ensuring their publicity, and directing them to the implementation of the access to information right.

At the FOI Annual Award Ceremony of FOICA the Golden Key is awarded to citizens who actively exercised their right of access to information, to NGOs, state and self-government bodies and journalists. The negative awards - rusty locks are awarded to the state and self-government bodies, which violated the Law on “Freedom of Information”.

FOICA won one more case in the court

After 2.5 years of court proceedings, on June 20, 2011 the Administrative Court satisfied FOICA's claim against Yerevan Urban Development & Investment PIU State Non-Commercial Organization (SNCO).

The case started on February 27, 2009, when FOICA sent a freedom of information request to the Yerevan Urban Development & Investment PIU for the following information:

1. How much money was allocated to the Yerevan Urban Development and Investment PIU SNCO for 2006-2008 years' State Budget?
2. Which organizations did the SNCO sign contracts with in 2006, 2007 and 2008?
3. What was the volume of the profit of the SNCO received from the signed contracts during 2006, 2007 and 2008 years?

The SNCO responded that the answer to the first question could be found in the "State Budget" Law of the RA of the respective years, while the other two questions contained a commercial secret and could not be released.

